**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արազափ, Մարգարա, Ջանֆիդա, Փշատավան, Բերքաշատ բնակավայրերի փողոցների գազաֆիկացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87-2 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 28-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ.** Կատարողի կողմից ստացված գրության և պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ Մեծամորի համայնքապետարանի և «Մատեսա» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87-2 պայմանագրի կատարման ժամկետի երկարացման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Մեծամորի համայնքապետարանի և «Մատեսա» ՍՊԸ -ի միջև 2024 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-24/87-2 պայմանագրի.

Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ի «Ժամկետը*» սյունակում նշված աշխատանքի կատարման ժամկետը 3-րդ չափաբաժնի մասով խմբագրվել և ներկայացվել նոր շարադասությամբ հետևյալ կերպ. «…Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2026 թվականի մայիսի 1-ը» բառերով:

Պայմանագրի Հավելված թիվ 2-ով և 09.10.2025թ. կնքված Համաձայնագիր 3-ի հավելված N 1-ով ներկայացված «ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ»-ը 3-րդ չափաբաժինների մասով «Աշխատանքների կատարման ժամկետը» աղյուսակի «Ավարտը» սյունակում նշված՝ «Աշխատանքաների սկզբից մինչև 2025 թվականի նոյեմբերի 15-ը» բառերը փոխարինվել է «Աշխատանքաների սկզբից մինչև 2026 թվականի մայիսի 1-ը» բառերով:

**Փոփոխության հիմնավորում.** Հիմք ընդունելով Պայմանագրի 1.1, 8.5 և 8.8 կետի համաձայն, միաժամանակ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ չի վերացել գնման պահանջը, ինչպես նաև հիմք ընդունելով 2026 թվականի փետրվարի 12-ի ՀՀ Կառավարության N 142–Ա որոշումը:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**